ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄՆԵՐ

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ
2015թ. հոկտեմբեր

Երևան, 10 նոյեմբեր 2015թ.

Մաս I Տնային տնտեսությունը

- Ունի համակարգիչ
- Ունի ինտերնետային կապ (*անկախ համակարգչի մատչելիությունից)*
- Ունի հեռախոս (ֆիքսված կամ բջջային կապ)
- Ունի գունավոր հեռուստացույց
- Ունի լվացքի մեքենա
- Ունի ավտոմեքենա/ֆուրգոն անձնական օգտագործման համար
- Կարող է փոխարինել մաշված կահույքը, եթե կարիք լինի *(ներառյալ կահույքի առանձին առարկաները, ինչպես նաև նախկինում օգտագործված կահույքը)*

Նախորդ 12 ամիսների ընթացքում տնային տնտեսությունը պարտք ունեցե՞լ է, այսինքն՝ ֆինանսական **դժվարությունների** պատճառով ի վիճակի չի եղել ժամանակին վճարել հետևյալի համար՝

- Վարձակալության կամ հիփոթեքի վճար հիմնական կացարանի համար
- Հիմնական կացարանի կոմունալ ծախսեր (ջեռուցում, էլեկտրաէներգիա, գազ, ջուր և այլն)
- Ապառիկի կամ այլ վարկերի մարումներ

Ասացեք խնդրեմ, արդյո՞ք ձեր տնային տնտեսությունը կարող է թույլ տալ

- Անսպասելի ծախս 44.000 դրամի չափով և վճարել իր սեփական ռեսուրսների միջոցով (առանց պարտք վերցնելու կամ ֆինանսական օգնություն խնդրելու)
- Տանը համարժեք ջերմաստիճան ապահովել
- Մսով, հավով, ձկով (կամ համարժեք բուսակերային) կերակուր ուտել երկու օրը մեկ
- Մեկշաբաթյա ամենամյա արձակուրդ տանից հեռու՝ այդ թվում նաև մնալով երկրորդ կացարանում կամ ընկերների/բարեկամների մոտ

Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը բավարարո՞ւմ է ծայրը ծայրին հասցնելու (գոյատևելու) համար

- Մեծ դժվարությամբ
- Դժվարությամբ
- Որոշակի դժվարությամբ
- Բավական հեշտորեն
- Հեշտորեն
- Շատ հեշտորեն

Մաս II Տնային տնտեսությունում 16 և բարձր տարիքի յուրաքանչյուր անձի համար կարո՞ղ եք ասել, որ նրանք ունեն կամ անում են հետևյալը

- Ունի իր ոտքին համապատասխան երկու զույգ կոշիկ (այդ թվում մեկը՝ բոլոր եղանակների համար)
- Փոխարինում է մաշված հագուստը (ներառյալ հնաոճ հագուստը) նոր, նախկինում չօգտագործված հագուստով
- Հավաքվում է ընկերների /ընտանիքի, բարեկամների հետ խմելու /ուտելու համար առնվազն ամիսը մեկ անգամ
- Տանից դուրս կանոնավոր կերպով (տարեկան մի քանի անգամ) մասնակցում է վճարովի ժամանցային այնպիսի միջոցառումների ինչպիսիք են սպորտը, կինոն, համերգը և այլն
- Իր վրա շաբաթական ծախսում է փոքր չափի գումար (առանց ստիպված լինելու խորհրդակցել ինչ-որ մեկի հետ)

Մաս III Տնային տնտեսությունում 1 տարեկանից բարձր, բայց 16 տարեկանից ցածր բոլոր երեխաներն ունեն կամ անում են հետևյալը՝

- Ունեն նոր հագուստ (չօգտագործված)
- Օրական մեկ անգամ ուտում են թարմ միրգ և բանջարեղեն
- Օրական երեք անգամ սնվում են
- Օրական առնվազն մեկ անգամ ուտում են մսով, հավով, ձկով (կամ համարժեք բուսակերային) կերակուր
- Տոնում են երեխաներին վերաբերող հատուկ առիթներ (ծնունդ, տարեդարձ, կրոնական միջոցառումներ)
- Մասնակցում են վճարովի դպրոցական էքսկուրսիաների և միջոցառումների